Թուրքիայի նոր «գազային» հավակնությունների մասին

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 24.12.2024 թ.[1]

Սիրիայում Բ. Ասադի իշխանության անկումից հետո համաշխարհային լրատվամիջոցներն սկսեցին հաճախակի հիշատակել «Կատարի գազատարի» մասին, որը նախատեսվում է կառուցել Պարսից ծոցից մինչև Եվրոպա: Այս նախագիծը համաձայնեցվել էր դեռ 2009 թ., սակայն «Արաբական գարունը» և Սիրիայում տեղի ունեցած պատերազմը հետաձգեցին դրա իրականացումը: Երթուղին պետք է անցներ Սաուդյան Արաբիայի, Հորդանանի, Սիրիայի և Թուրքիայի տարածքներով: Այդպիսով, Դոհան կարող է Եվրոպային լիովին ապահովել «կապույտ վառելիքով»՝ վերջ դնելով Ռուսաստանից նրա կախվածությանը:

Այժմ, հիմնական խոչընդոտի՝ Ասադի վարչակարգի, վերացմամբ, ինչպես կարծում են մերձավորարևելյան և արևմտյան շատ վերլուծաբաններ, նախագիծը կարող է անխոչընդոտ վերածնունդ ապրել: Սակայն, իրականում, անցած տարիների ընթացքում «սիրիական խոչընդոտին» ավելացել են նաև այլ, ոչ պակաս լուրջ հիմնախնդիրներ, որոնց լուծումը դեռևս չի գտնվել: Նախ, Էր Ռիադի և Դոհայի հարաբերություններում տեղի է ունեցել արմատական վատթարացում, և Սաուդյան Արաբիան հակված չէ իր տարածքը տրամադրել գազատարի կառուցման համար: Երկրորդ՝ Կատարը հաջողությամբ հաստատել է իր էներգետիկ հումքի վաճառքը հեղուկ բնական գազի (ՀԲԳ) տեսքով, որը նրան ազատել է թանկարժեք խողովակաշարերի կառուցման ծախսերից և ապահովել դրանց անվտանգությունը միջազգային մակարդակով: Երրորդ՝ Վաշինգտոնը (մի ժամանակ Կատարի երթուղու գլխավոր լոբբիստը) կորցրել է հետաքրքրությունը նախագծի նկատմամբ, քանի որ առանց այն էլ ՌԴ-ն գործնականում լքել է եվրոպական գազի շուկան՝ ԱՄՆ-ին և Քաթարին հնարավորություն տալով Եվրոպային ապահովել իրենց ՀԲԳ-ով: Վերջապես՝ Ասադի հեռանալը չհանգեցրեց հիպոթետիկ գազատարի սիրիական հատվածի անվտանգության խնդրի լուծմանը: Սիրիան քաղաքացիական պատերազմի նոր փուլի շեմին է, անկախ նրանից, որ նրա նոր իշխանությունների աշխարհաքաղաքական հովանավորները փորձում են վստահություն դրսևորել այս երկրի կայուն ապագայի նկատմամբ:

Ի սկզբանե այն կարծիքը կար, թե «Կատարի խողովակի» նախագծից ամենաշատը կշահի Թուրքիան: Գազատարը կիրականացնի եվրասիական գազային հանգույց դառնալու նրա վաղեմի երազանքը՝ թույլ տալով լծակներ ձեռք բերել Եվրոպայի վրա, մեծ գումարներ վաստակել և վերջ տալ էներգետիկ սովին, որն այս երկիրն ապրեց 2000-ական թվականներին իր արդյունաբերական և տնտեսական առաջընթացի ժամանակ:

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 23.12.2024 թ.:

Հետևաբար, եթե «Կատարի խողովակի» հետ կապված իրավիճակը դեռ հեռու է կարգավորվելուց, ապա Թուրքիան ստիպված կլինի հետաձգել իր ծրագրերը:

Անկարայում, սակայն, այդպես չեն համարում: Բանն այն է, որ Էրդողանի թիմն այժմ դիտարկում է գազի երթուղին փոխելու և այն Կատարից Իրաքով Թուրքիա տեղափոխելու հնարավորությունը: Ինչպես հակված են ենթադրելու որոշ ռուս փորձագետներ, օրակարգ մտցնելով այդ հարցը, Անկարան ձևեր է թափում՝ Թուրքիայում ռուսական մատակարարումների հիման վրա «*գազի բորսայի*» ստեղծման շրջանակներում Մոսկվայից իր համար առավել հարմար պայմանների շուրջ բանակցելու համար: Ռուս վերլուծաբանները չեն հավատում, որ իրագործելի լինի նախնական արժեքով $20 մլրդ արժեցող նոր «Քաթարի երթուղին», կարծում են, որ դրա անցկացումն ու շահագործումը կապված են ոչ պակաս խնդիրների հետ, քան «*հին տարբերակի*» պարագայում էր:

Բայց հիմնախնդիրներ իսկապես կան: Թուրքիան պետք է սաուդցիներին հաշտեցնի Կատարի թագավորական տան հետ, համակողմանի աջակցություն ցուցաբերի Բաղդադի կենտրոնական կառավարությանը (այդ մասով աշխատանքներն արդեն ինտենսիվորեն ընթանում են) և չեզոքացնի *«քրդական սպառնալիքը»* Հյուսիսային Իրաքում և Սիրիայում: Բայց Անկարայի համար այս բարդ խաղն «արժեր վառված մոմերը», քանի որ նա ձգտում է Կատարի գազի նոր երթուղին համաժամանակացնել Պարսից ծոց–Թուրքիա–Եվրոպա լոգիստիկ միջանցքի հետ՝ դրանով իսկ ապահովելով Արևմտյան Ասիայում քաղաքական և տնտեսական գերիշխան դառնալու պայմանները: Այս լույսի ներքո ռուս փորձագետների թերահավատությունը, թվում է, հազիվ թե տեղին լինի. վերջին 20 տարվա իրադարձությունները ցույց են տալիս, որ Էրդողանի հավակնություններն ու հաստատակամությունը մշտապես շոշափելի արդյունքներ են բերում Թուրքիային: